NATURE
CONSERVATION AGENCY
OF THE CZECH REPUBLIC

# ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ԱՊԱԳԱՆ

1

# Չեխիայում բնության պահպանության վերաբերյալ ԵՄ հրահանգների կիրարկման գործընթացը

Ֆրանտիշեկ Պելց
տնօրեն
Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալություն

Երևան
մարտի 31, 2022թ.

Agentura ochrany přírody a krajiny ČR | www.nature.cz

2

## Բնության պահպանությունը Չեխիայում 1980-ականներին և 1990-ականներին

- Բնության պահպանությունը արդյունավետ չէր կոմունիստական ռեժիմի օրոք
- Բնապահպանական հաստատությունները (ներառյալ Բնապահպանության նախարարությունը) ստեղծվեցին 1990թ-ից հետո միայն
- «Բնության պահպանության մասին» արդիական ակտն ուժի մեջ մտավ 1992թ-ին





## Բնության պահպանության 4 հիմնասյուները Չեխիայի Հանրապետությունում

- Հետազոտություններ և մշտադիտարկումներ
- Իրավական կարգավորումներ
- Տնտեսական միջոցառումներ
- Հանրային իրազեկվածություն և հաղորդակցություն



## Բնության պահպանվող տարածքները համապետական մակարդակում




- Ազգային պարկեր
- Պահպանվող լանդշաֆտի տարածքներ

- Բնության ազգային արգելոցներ
- Բնության ազգային հուշարձաններ
- Բնության արգելոցներ
- Բնության հուշարձաններ

**Զբաղեցնում են տարածքի 17%-ը:**



## Կենդանատեսակների (բուսատեսակների) պաշտպանություն

- Տեսակների դասակարգում օրենքում + տեսակների ցանկ ենթաօրենսդրական ակտերում

- Տեսակների վերաբերյալ գործողությունների ծրագրեր և մարզերի մակարդակով գործ. ծրագրեր՝ ընտրված տեսակների համար



## Անդամակցում ԵՄ-ին մայիսի 1-ին, 2004թ.

- ԵՄ պահանջների կատարում մինչ անդամակցման ամսաթիվը
  - ԵՄ հրահանգների փոխադրում ազգային օրենսդրություն
  - Նոր ԲՀՊՏ-ների հիմնում՝ ըստ ԵՄ օրենսդրության («Նատուրա 2000» ցանց)
  - Պահպանվող տեսակների ցանկի համապատասխանեցում
- Նախքան անդամակցումը (կամ անդամակցմանը հաջորդող՝ սեղմ ժամկետներում) մենք
  - ուսումնասիրեցինք (քարտեզագրեցինք) տեսակներն ու միջավայրերը
  - ստեղծեցինք նոր ԲՀՊՏ-ներ



## Նախապատրաստական աշխատանքներ «Նատուրա 2000» ցանցի համար

- Քննարկումներ առ այն, թե ով է այն կառավարելու և պատասխանատու լինելու դրա համար
- Բնության պահպանության գործակալությունն ընտրվեց որպես պատասխանատու կառույց՝ ԵՄ հրահանգների մոտարկման համար անհրաժեշտ բոլոր պահանջվող տվյալների և ելակետային նյութերի մշակման համար



# Փորձագիտական նախապատրաստական աշխատանքներ

- Ի տարբերություն Հայաստանի՝ Շրջակա միջավայրի նախարարության (ռազմավարական կառավարում) և պահպանվող տարածքների վարչակազմերի (կոնկրետ տարածքի կառավարում) միջև արդեն իսկ գոյություն ուներ միջանկյալ կառույց `

  Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալություն

  (մեթոդաբանական ուղղորդում

  և համապետական խնդիրների համակարգում)

NATURE CONSERVATION AGENCY OF THE CZECH REPUBLIC



# Հիմնաքարեր և հենարաններ

Միջավայրերի վերաբերյալ ԵՄ հրահանգ

- Չեխիայի Հանրապետություն. միջավայրերի ամբողջական ուսումնասիրություն երկրի ողջ տարածքում, կոնկրետ կենդանատեսակների և բուսատեսակների փորձագիտական ուսումնասիրություններ, առկա տվյալների ստուգում
- Հայաստան. «Էմերալդ» տարածքների սահմանման գործընթացն սկսվել է (Հայաստանը ստորագրել է Բեռնի կոնվենցիան 2007թ-ին)

# Հիմնաքարեր և հենարաններ

Թռչունների վերաբերյալ ԵՄ հրահանգ

- Չեխիայի Հանրապետություն. Կարևոր թռչնաբանական տարածքները (BirdLife միջազգային չափանիշների համաձայն)՝ որպես ելակետ
- Հայաստան. նույնպես ունի ԿԹՏ-ների ցանց՝ ԿԹՏ-ների չափանիշներին և Բեռնի կոնվենցիայով սահմանված «Էմերալդ» ցանցին համապատասխան



# «Նատուրա 2000»-ը Չեխիայում

41 թռչնաբանական տարածք (Թռչունների վերաբերյալ հրահանգով նախատեսված՝ հատուկ պահպանվող տարածքներ)



1,112 կարևոր նշանակության եվրոպական տարածք (Միջավայրերի վերաբերյալ հրահանգով նախատեսված՝ համայնքային նշանակության տարածքներ)



## «Նատուրա 2000» տարածքների կառավարումը

- շատ դեպքերում համընկնում գործող ԲՀՊՏ-ների հետ
- ընտրվեցին գործող պետական մարմիններ՝ նոր հիմնված ԲՀՊՏ-ների մասով իրավասություններն ու պարտականությունները բաշխելու նպատակով. նոր հաստատություն ստեղծելու կարիք չառաջացավ
- սակայն անհրաժեշտ եղավ բարելավել գործող հաստատությունների՝ ԲՀՊՏ-ների կառավարման համար պատասխանատու բնության պահպանության ոլորտի պետական մարմինների (օր.՝ Բնության պահպանության գործակալություն, Ազգային պարկերի վարչակազմեր, մարզային վարչակազմեր) կարողությունները



## Չեխիայի Հանրապետության մարզերը և լայնածավալ պահպանվող տարածքները



# Եզրահանգումներ

- Բնության պահպանության վեաբերյալ ԵՄ հրահանգների մոտարկումը անկասկած դրական քայլ է:

(*դրա մասին ավելի մանրամասն հաջորդ ելույթի ժամանակ կխոսի սենատոր պրն Պետր Օրելը*)

- Հաջողված մոտարկում ապահովելու համար անհրաժեշտ է ուժեղացնել գործող հաստատությունները կամ նույնիսկ մտորել բավարար փորձագիտական կարողություններով օժտված նոր հաստատություններ ստեղծելու մասին



# Շնորհակալություն ուշադրության համար

**Ֆրանտիշեկ Պելց**
frantisek.pelc@nature.cz

NATURE CONSERVATION AGENCY OF THE CZECH REPUBLIC

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՎ ԱՊԱԳԱՆ

